ՐԱՖՖԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
RAFFI GEVORGYAN

19-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ԱՆԳԼՈ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Անգլո-իրանական քաղաքական և տնտեսական շփումները սկզբնավորվել են դեռևս 16-րդ դարի երկրորդ կեսին անգլիացի վաճառականների միջոցով: 1600թ-ին հիմնադրված Օստ-հնդկական ընկերության շնորհիվ անգլիացիների ազդեցությունը Իրանում էլ ավելի է ուժեղանում հետագա դարերի ընթացքում: Դեռևս 18-րդ դարից Անգլիան և Ռուսաստանը զգալի տարածայնություններ ունեին և մրցակցային պայքար էին ծավալում Իրանում տնտեսական և քաղաքական առաջնություն ունենալու համար: Ռուսաստանի տարածքով առևտրի դադարեցումը Անգլիայի համար խոչընդոտ չհանդիսացավ Իրանի հարավում էլ ավելի ակտիվ գործունեություն ծավալելու համար: 18-րդ դարի երկրորդ կեսին անգլիացիները ստանում են արտոնյալ իրավունքներ, որոնց շնորհիվ Օստ-հնդկական ընկերության առևտրի ծավալները գնալով աճում են առաջիկա տասնամյակներում, դրան զուգահեռ ամրապնդելով նաև Անգլիայի ազդեցությունն Իրանի քաղաքական և տնտեսական կյանքում: Իրավիճակը տարածաշրջանում ավելի է բարդանում 19-րդ դարի սկզբին, երբ անգլո-ռուսական երկկողմ հակասություններին գումարվում է նաև Ֆրանսիայի գործոնը, որը Նապոլեոնի իշխանության տարիներին նույնպես պայքար էր մղում արևելքում իր դիրքերը ամրապնդելու և Անգլիային դուրս մղելու համար:

1800թ-ի սկզբին Իրան է ժամանում Օստ-հնդկական ընկերության պաշտոնյա Ջոն Մալքոլմը[1]: Ժամանելով Բուշեհր, Մալքոլմը ծավալում է ակտիվ գործունեություն: Նա դեպի Թեհրան է շարժվում բազմամարդ պատվիրակության ուղեկցությամբ, և իր ճանապարհին կաշառում է բոլոր մեծ ու փոքր պաշտոնյաներին: Մալքոլմը Թեհրան է հասնում միայն նոյեմբերին: Բանակցությունները Իրանի վեզիր Հաջի Իբրահիմի հետ ավարտվում են 1801թ-ի հունվարին՝ անգլո-իրանական քաղաքական և առևտրային պայմանագրերի կնքմամբ[2]:

---

[1] Н.А. Кузнецова, Иран в первой половине XIX века, Москва 1983, стр. 30

[2] А.Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван 1958, стр. 45-47

Անգլո-իրանական քաղաքական պայմանագիրը բաղկացած էր հինգ կետից: Առաջին կետով հռչակվում էր բարեկամություն և միություն Իրանի և Անգլիայի միջև: Հաջորդ երկու կետերը վերաբերում էին Աֆղանստանին: Նշվում էր, որ Հնդկաստանի վրա աֆղանների հարձակման դեպքում Իրանը պետք է պատժիչ արշավանք կատարեր դեպի Աֆղանստան: Չորրորդ կետում Անգլիան պարտավորվում էր ռազմական օգնություն՝ քնդանոթներ և այլ զինամթերք, ինչպես նաև զինվորական մասնագետներ տրամադրել Իրանին, եթե Իրանը ենթարկվեր Աֆղանստանի կամ Ֆրանսիայի հարձակմանը: Պայմանագրի վերջին կետում նշվում էր, որ Ֆրանսիայի կողմից Պարսից ծոցի ավազանի իրանական նավահանգիստները կամ կղզիները գրավելու փորձի դեպքում, հակառակորդի դեմ հանդես էին գալու անգլո-իրանական համատեղ ուժերը: Այս պայմանագրի արդյունքում արգելվում էր ֆրանսիացիների ամեն տեսակի գործունեությունը Իրանում:

Առևտրային պայմանագիրը կազմված էր վեց կետից: Այն լայն հնարավորություններ էր ընձեռում անգլիական վաճառականներին: Վերջիններս Իրանի ողջ տարածքում ազատ տեղաշարժվելու, ձեռնարկություններ հիմնելու, տներ կառուցելու և այլ արտոնյալ իրավունքներ էին ստանում: Այս պայմանագիրը անգլիացիներին ազատում էր մի շարք հարկերից և մաքսատուրքերից: Անգլիացիները իրավունք էին ստանում որպես ծառա վարձել տեղացիներին և պատժել նրանց ըստ իրենց հայեցողության:

Այս երկու պայմանագրերն էլ մեծ ոգևորությամբ ընդունվեցին անգլիական իշխանությունների կողմից: Մալքոլմը, կարելի է ասել, առավելապես լուծում տվեց տվյալ պահին առկա դիվանագիտական խնդիրներին. կասեցրեց Ֆրանսիայի հնարավոր մուտքը Իրան, միևնույն ժամանակ ապահովեց Անգլիայի քաղաքական և տնտեսական ազդեցության ամրապնդումը Իրանում: Եթե առևտրային պայմանագրի հակառուսական բնույթն առավել բացահայտ էր, քանի որ այն հարված հասցրեց Ռուսաստանի տնտեսական շահերին բացառիկ արտոնություններ շնորհելով անգլիացի վաճառականներին, ապա քաղաքական պայմանագրում Անգլիայի դիրքորոշումն առաջին հայացքից աննկատ է: Ինչ խոսք, 1801թ-ի անգլո-իրանական քաղաքական պայմանագիրը առաջին հերթին ուղղված էր Ֆրանսիայի դեմ, սակայն այն իր ենթատեքստում ուներ նաև հակառուսական բնույթ: Ավելի պարզ դարձնելու համար այս պայմանագրի հակառուսական ուղղվածությունը, կարևոր ենք համարում համառոտ ներկայացնել այն իրադարձությունները, որ նախկինում տեղի էին ունեցել տարածաշրջանում:

Դեռևս 1800թ-ի նոյեմբերի 18(30)-ին Ռուսաստանի կայսր Պավել 1-ինը՝ արձագանքելով վրաց թագավոր Գեորգի 12-րդի խնդրանքին, ստորագրում է հռչակագիր, որով հայտարարում է Վրաստանի միացումը Ռուսաստանին[3]: Թեև այս հռչակագրի ընթացքը ժամանակավորապես կանգ է առնում, 1801թ-ի մարտին Պավել 1-ինի սպանության պատճառով, այնուամենայնիվ, Անգլիայի համար սա կարող էր անհանգստության լուրջ առիթ հանդիսանալ: Նախ և առաջ, այս ժամանակաշրջանում Ռուսաստանը դուրս էր եկել հակաֆրանսիական կոալիցիայի կազմից և ռուս-ֆրանսիական հարաբերություններում զգալի մերձեցում էր նկատվում: Ֆրանսիայում իշխանության եկած Նապոլեոնը, կոչ էր անում ռուսաց կայսրին միանալ իր ծրագրած հնդկական արշավանքին: Մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ պայմանագիրը ստորագրվեց այն ժամանակ, երբ ռուսական զորքերն արդեն տեղակայված էին Վրաստանում և ցանկության դեպքում կարող էին իրենց տիրապետության տակ առնել ողջ Անդրկովկասը[4]: Անգլիան պատրաստ էր ամեն կերպ խոչընդոտելու Ռուսաստանի առաջխաղացմանը տարածաշրջանում և այդ նպատակով դաշինք էր կնքում Իրանի հետ, որն իր հերթին գտնվում էր նախապատերազմական վիճակում Ռուսաստանի հետ: Փաստորեն անգլո-իրանական պայմանագրերի միջոցով Անգլիան հեռահար ծրագրեր ուներ. քաղաքական և տնտեսական կախվածության մեջ գցել Իրանը և թելադրել իրեն հարմար արտաքին քաղաքականություն:

Պարսից արքունիքը ևս հետաքրքրված էր այս պայմանագրերի կնքմամբ: Նորընծա Ֆաթհ Ալի շահը, գիտակցելով ուժերի անհավասարությունը և պարսկական բանակի հետամնացությունը ռուսականի համեմատությամբ, հույս ուներ այսպիսով Ռուսաստանի դեմ առաջիկա պատերազմում ուժեղ դաշնակից ձեռք բերել և վերադարձնել Վրաստանը և Անդրկովկասը: Պատերազմն անխուսափելի է դառնում, երբ անգլո-իրանական պայմանագրի կնքմանը հաջորդում է Ալեքսանդր 1-ի սեպտեմբերի 12(24)-ի հռչակագիրը, որով Վրաստանը պաշտոնապես միացվում էր Ռուսաստանին[5]:

Ամփոփելով 1801թ-ի անգլո-իրանական պայմանագրերի արդյունքները, պետք է նշել, որ Անգլիան այս պայմանագրով ոչ միայն կասեցնում էր Ֆրանսիայի առաջխաղացումը, այլև հանդես էր գալիս Ռուսաստանի շահերի դեմ դեռևս ռուս-պարսկական պատերազմից առաջ: Հատկանշական է, որ

---

[3] Н. С. Киняпина, Внешняя политика России первой половины XIX века, Москва 1963, стр. 38
[4] А.Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван 1958, стр. 49
[5] Н. С. Киняпина, Кавказ и Средняя Азия во внешней политике России, Москва 1984, стр. 100-101

Իրանի շահը, Ռուսաստանի դեմ պայքարելու համար Անգլիայից զենք է պահանջում՝ հիմնվելով հենց այս պայմանագրի վրա, չնայած այն հանգամանքին, որ անգլո-իրանական պայմանագրում չկար այդպիսի կետ: Այսինքն, իրանական կողմին ևս պարզ էր Անգլիայի հակառուսական դիրքորոշումը: Փաստորեն, Անգլիան այդ ժամանակ գտնվելով Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների մեջ միևնույն պահին Իրանի միջոցով փորձում էր պատերազմ հրահրել Կովկասում:

1805թ-ին երկու դաշնակիցների միջև հարաբերությունները լարվում են, երբ Անգլիան օգնության դիմաց պահանջում է Իրանից զիջել Պարսից ծոցի կղզիները: Անգլո-իրանական բանակցությունները ձախողվում են և Ֆաթհ Ալի շահը փորձում է հարաբերություններ հաստատել Ֆրանսիայի հետ: Ժամանակավորապես խզված անգլո-իրանական հարաբերությունները կրկին վերականգնվում են 1809թ-ին, երբ Թեհրան է ժամանում անգլիական դեսպան Հարֆորդ Ջոնսի պատվիրակությունը: 1809թ-ի փետրվարի 14-ին անգլիական պատվիրակությունը Թեհրանում պաշտոնական ընդունելության է արժանանում: 1809թ-ի մարտի 15-ին կնքվում է անգլո-իրանական նախնական պայմանագիրը, որը բաղկացած էր ութ պարբերությունից[6]: Առաջին պարբերության մեջ ասվում էր, որ պայմանագիրը նախնական է և հետագայում պետք է կնքվի Անգլիայի և Իրանի միջև միության և բարեկամության վերջնական պայմանագիր: Երկրորդ կետով հաստատում էր միություն և բարեկամական հարաբերություններ Իրանի շահի և Անգլիայի թագավորի և նրանց ժառանգների միջև: Այս պայմանագրի կարևոր կետերից էր այն, որ Իրանը պարտավորվում էր կասեցնել եվրոպական տերությունների հետ նախկինում կնքված բոլոր պայմանագրերը, թույլ չտալ իր տարածքով որևէ բանակի տեղաշարժ դեպի Հնդկաստան կամ էլ Պարսից ծոցի նավահանգիստների ուղղությամբ: Հատուկ կետ էր ներառված աֆղանների վերաբերյալ, որտեղ կողմերը պարտավորվում էին միմյանց դեմ չհանել աֆղանական ցեղերին: Անգլիան իր հերթին պարտավորվում էր օգնություն ցուցաբերել Իրանին որևէ եվրոպական տերության հետ պատերազմի ժամանակ և վճարել դրամաշնորհ: Անգլիայի և Իրանի հետ պայքարող եվրոպական տերության, այսինքն՝ Ռուսաստանի, միջև հաշտության պայմաններում, Անգլիան պարտավորվում էր միջնորդի դեր ստանձնել, սակայն եթե չհաջողվեր կնքել հաշտություն Անգլիան կարող էր շարունակել ռազմական օգնություն ցուցաբերել Իրանին: Այսպիսով, անգլո-

[6] А.Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван 1958, стр. 231-232

իրանական պայմանագիրն Իրանում վերականգնում էր անգլիական ազդեցությունը և ուներ ընդգծված հակառուսական բնույթ: Անգլիան պարտավորվելով օգնություն ցուցաբերել Իրանին այդպիսով ցանկանում էր երկարաձգել պատերազմի ելքը: Բանն այն է, որ Տիլզիթի հաշտությունից հետո, Անգլիան անհանգստացած էր ռուս-ֆրանսիական հարաբերությունների կարգավորմամբ և ստիպելով Ռուսաստանին պատերազմել Իրանի դեմ, փորձում էր կանխել հնարավոր հաշտությունը, ինչը կբերեր Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը նաև ողջ կովկասյան տարածաշրջանում: Այս պայմանագրից հետո անգլիացի զինվորականներն ակտիվ մասնակցություն են ունենում Աբբաս Միրզայի բանակի վերակազմավորման աշխատանքներում: Զոնսը ծավալում է ակտիվ դիվանագիտական գործունեություն, փորձելով ստեղծել թուրք-իրանական հակառուսական դաշինք: Անգլիական դիվանագիտության ջանքերի շնորհիվ է պայմանավորված Ասկերանի բանակցությունների ձախողումը, ինչպես նաև պարսից զորքի որոշակի հաջողություններն այս շրջանում:

1811թ-ի վերջին Իրան է ժամանում նորանշանակ անգլիական դեսպան Գոռ Աուզլին: Նրա առաքելության նպատակն էր հանդիսանում Իրանի հետ վերջնական պայմանագրի կնքումը, որը պետք է փոխարիներ 1809թ-ին կնքված նախնական պայմանագրին: Բացի այս նպատակից, Աուզլին շահին է հանձնում 120000 թուման ռազմական օգնությունը, որը հավելյալ գումար էր և ներառված չէր պայմանագրով նախատեսված ամենամյա ռազմական օգնության մեջ: 1812թ-ի մարտի 14-ին կնքվում է անգլո-իրանական վերջնական պայմանագիրը, որը փոխարինելու էր 1809թ-ի նախնական պայմանագիրը[7]: Այս պայմանագրի առաջին կետով Իրանը պարտավորվում էր խզել բոլոր այն պայմանագրերը, որոնք մինչ այդ կնքվել էին Իրանի և որևէ այլ Եվրոպական տերության հետ, Իրանը պարտավորվում էր իր տարածք չթողնել այլ Եվրոպական տերության զորքեր և վտարել նույնիսկ մասնավոր անձանց: Այս կետով Անգլիան ձգտում էր ապահովել իր հնդկական գաղութների անվտանգությունը և այն ուղղված էր առաջին հերթին Ֆրանսիայի դեմ: Ռուսաստանի դեմ էր ուղղված պայմանագրի երկրորդ կետը, որտեղ նշվում էր, որ որևէ Եվրոպական բանակի կողմից Իրանի վրա կատարված հարձակման դեպքում, Անգլիան պարտավորվում էր մինչ պատերազմի ավարտն Իրանին վճարել տարեկան 200000 թուման, իսկ հաջորդ կետում նշվում էր, որ Անգլիան պարտավորվում էր միջնորդի դեր ստանձնել Իրանի և նրա հետ պատերազմող երկրի միջև, սակայն

[7] Б.П. Балаян, Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ереван 1988, стр. 86

պիտի շարունակեր ռազմական և դրամական օգնությունը մինչև խաղաղության կնքումը: Պայմանագրի յոթերորդ կետը նույնպես ուղղված էր Ռուսաստանի դեմ. այս կետով Անգլիան պարտավորվում էր ծովային ինժեներներ և սպաներ գործուղել Իրան, Կասպից ծովում նավատորմ ստեղծելու համար: Պայմանագրի մյուս կետերը վերաբերում էին աֆղաններին, ինչպես նաև մի շարք տնտեսական և քաղաքական խնդիրների: 1812թ-ի անգլո-իրանական պայմանագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս անգլիական դիվանագիտության իրական նպատակները: Մի կողմից Անգլիան հանդիսանում էր Ռուսաստանի դաշնակիցը և անդամակցում էր հակաֆրանսիական կոալիցիային, սակայն այս պայմանագրով հանդես էր գալիս կատարելապես թշնամական դիրքերից, քանի որ ոչ միայն չէր նպաստում ռուս-պարսկական պատերազմի ավարտին, այլև տրամադրելով ռազմական և դրամական օգնություն ամեն կերպ ջանում էր երկարաձգել պատերազմը:

Սակայն Ռուսաստանի դեմ ուղղված անգլիական ծրագրերին վիճակված չէր իրականություն դառնալ: 1812թ-ի մայիսի 16-ին Բուխարեստում կնքվում է հաշտություն Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որը խաթարեց 1810թ-ին կնքված թուրք-իրանական պայմանագիրը, որտեղ կողմերը պարտավորվում էին հաշտություն կնքել Ռուսաստանի հետ միայն փոխադարձ համաձայնության դեպքում: Ռուսաստանը ցանկանում էր հաշտություն կնքել նաև Իրանի հետ, որ կարողանար տեղափոխել իր ուժերը և կենտրոնացնել բանակը Նապոլեոնի դեմ պատերազմելու համար, սակայն ինչպես տեսնում ենք անգլո-իրանական պայմանագիրը փաստորեն անհնարին է դարձնում հնարավոր խաղաղությունը: Միջազգային իրադրությունը փոխվում է 1812թ-ի հայրենական պատերազմում Ռուսաստանի հաղթանակի շնորհիվ: Այս հաղթանակին հաջորդում են ռուսական բանակի հաջողությունները կովկասյան ճակատում և պարսկական կողմը ի վերջո ստիպված է լինում բանակցությունների սեղանի շուրջ նստել: Գյուլիստանի հաշտությունը կնքվում է 1813թ-ի հոկտեմբերի 12(24)-ին: Անգլիան այս անգամ էլ իր ակտիվ մասնակցությունն է ունենում, որի հետևանքով սահմանների հարցը վերջնական լուծում չի ստանում: Իրանին վերապահվում է իրավունք Ռուսաստանին դիմել սահմանները վերանայելու խնդրանքով: Այսպիսով ցանկացած հարմար պահի, Անգլիան կարող էր նոր պատերազմ հրահրել Իրանի և Ռուսաստանի միջև:

Գյուլիստանի հաշտությունը զգալիորեն թուլացնում է անգլիական ազդեցությունն Իրանում: Անգլիայի դեսպան Աուզլին հետ է կանչվում Լոնդոն: Վերջինիս փոխարինում է Հենրի Էլլիսը, որին էլ հանձնարարված էր նոր անգլո-իրանական պայմանագրի կնքումը: Հատկանշական է, որ այս պայմանագիրն ի

սկզբանե գաղտնի է եղել և հրապարակվել է միայն 1839թ-ին[8]: Այն հակասում էր անգլո-ռուսական 1812թ-ի դաշինքին և Գյուլիստանի հաշտության պայմանագրին:

1814թ-ի նոյեմբերի 13(25)-ին Թեհրանում կնքված պայմանագրի առաջին կետով Իրանը պարտավորվում էր դադարեցնել իր հարաբերությունները այն բոլոր եվրոպական տերությունների հետ, որոնք գտնվում էին Անգլիայի հետ թշնամական հարաբերությունների մեջ: Այսպիսով, կարելի է ասել Իրանն Անգլիային էր ենթարկեցնում իր արտաքին քաղաքականությունը, քանի որ, ըստ էության, ստիպված էր մշտապես հետևելու տեղի ունեցող փոփոխություններին և հարաբերություններ պահպանել միայն այն տերությունների հետ, որոնց հետ Անգլիան կգտնվեր բարեկամական հարաբերությունների մեջ[9]: Այս պայմանագրի երրորդ կետում նշվում էր, որ Ռուսաստանի և Իրանի միջև սահմանները պետք է որոշվեին Անգլիայի մասնակցությամբ և համաձայնությամբ: Փաստորեն Գյուլիստանի պայմանագրից հետո Անգլիան իրեն իրավունք էր վերապահում վիճարկել սահմանի հարցը, Ռուսաստանի կամքից անկախ: Բնականաբար, այս կետը ներառված էր լարվածությունը բարձր պահելու և հնարավոր միջազգային իրադրության դեպքում պատերազմը Ռուսաստանի և Իրանի միջև վերսկսելու համար: Չորրորդ կետով սահմանվում էր, որ Իրանի վրա որևէ Եվրոպական տերության հարձակման դեպքում, Անգլիան պետք է Իրանին ռազմական օգնություն ցուցաբերեր կամ էլ մինչև պատերազմի ավարտը վճարեր տարեկան 200000 թուման: Հաջորդիվ նշվում էր, որ եթե Եվրոպական տերությունը, որը գտնվում էր Իրանի հետ պատերազմի մեջ Անգլիայի հետ ուներ խաղաղ հարաբերություններ, ապա Անգլիան պետք է միջնորդեր խաղաղության համար, իսկ անհաջողության դեպքում կարող էր շարունակել ֆինանսավորել և օգնություն ցուցաբերել Իրանին:

Այս պայմագիրը կարծես թե վերջնականապես ձևավորում է անգլիական արտաքին քաղաքականության ուղղություններն Իրանում, միևնույն ժամանակ այն սկզբնավորում է Իրանում անգլո-ռուսական պայքարի նոր փուլը: Կուզենայինք նշել, որ Թեհրանի պայմանագիրը և դրան հաջորդած դիվանագիտական պայքարի արդյունքում էլ հետագայում ծավալվեց 1826-1828թթ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: Եվ եթե առաջին ռուս-պարսկական պատերազմի հրահրման գործում իր մասնակցությունն ուներ նաև Ֆրանսիան,

---

[8] Б.П. Балаян, Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ереван 1988, стр. 100

[9] Б.П. Балаян, Международные отношения Ирана в 1813-1828гг, Ереван 1967, стр. 21

ապա երկրորդ պատերազմը հիմնականում անգլիական միջամտության արդյունքն էր: Գյուլիստանի հաշտությունից հետո Անգլիան շարունակում է դիվանագիտական պայքարը սահմանների վերանայման համար:

Այսպիսով, դիտարկելով 19-րդ դարի սկզբի անգլո-իրանական պայմանագրերը, կարող ենք նշել, որ Անգլիան փորձում էր երկակի քաղաքականություն վարել Ռուսաստանի հետ, մի կողմից ձգտելով օգտագործել ռուսական բանակի հզորությունը Նապոլեոնի դեմ պատերազմում, մյուս դեպքում ամեն կերպ խոչընդոտում էր Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանն Անդրկովկասում: Անգլիան, ունենալով վաղեմի տնտեսական և քաղաքական հակասություններ Ռուսաստանի հետ, փորձում էր Իրանն օգտագործել իր հակառուսական քաղաքականության մեջ, ինչպես նաև որպես պատնեշ, ապահովելու համար Հնդկաստանի անվտանգությունը: Անգլիայի դերն ակնհայտ է նաև 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի ձգձգման գործում, քանի որ այս պատերազմի երկարատև ընթացքը պայմանավորված էր ոչ այնքան լարված ռազմական գործողություններով, որքան դիվանագիտական պայքարով: 1801, 1809, 1812 և 1814 թվականների անգլո-իրանական պայմանագրերը պետք է դիտարկել որպես մեկ ընդհանուր շղթայի օղակներ: Դրանք թեև առաջ եկան Անգլիայի և Ֆրանսիայի պայքարի արդյունքում, սակայն ուղղված էին նաև Ռուսաստանի դեմ, չնայած այն հանգամանքին, որ այս ամբողջ ժամանակաշրջանում Անգլիան գրեթե միշտ հանդիսացել է Ռուսաստանի պաշտոնական դաշնակիցը Նապոլեոնի դեմ մղվող պայքարում:

The author analysis Anglo-Iranian agreements of early 19 century. In the article he also highlights the antirussian dimension of those historical acts, although England was officially recognized as partner of Russia against France.